

Առաջին օր.-

1. Պատմութիւնը կարդա՛ եւ ընդգծե՛ բայերը:
2. Ընդգծուած բայերը ընդօրինակե՛ պատմութեան կցուած թուղթին վրայ:

ՔԱՄԻՆ ԵՒ ԱՐԱՆ

Արան օր մը կը հարցնէ Քամիին.

— Քամի՛, դուն ինչո՞ւ միշտ կ'անապարես ու կը վազես:

— Պզտիկ տղայ, — կը պատասխանէ Քամին, — կ'անապարես՝ որովհետեւ շատ գործ ունիմ, զբաղած եմ:

— Ծատ գո՞րծ ունիս, դո՞ւն..., — կը զարմանայ Արան:

— Այո՛, շա՛տ, — կը պատասխանէ Քամին, — իմ գործս մարդերուն ծառայել է, մարդերո՞ւն եւ բոլոր կենդանիներուն ու բոյսերուն: Մտի՛կ ըրէ ու պատմե՛մ քեզի թէ ես ինչե՛ր կ'ընեմ. Աշխարհի վրայ կան երկիրներ, որոնք շատ տաք են, եւ կան ուրիշ երկիրներ, որոնք շատ ցուրտ են. ես կ'երթամ տաք երկիրներ, եւ անոնց տաք օդէն կը տանիմ դէպի ցուրտ երկիրներ, որպէսզի մարդիկ հոն տաքնան քիչ մը. յետոյ կ'երթամ ցուրտ երկիրներ, եւ անոնց պաղ օդէն կը տանիմ դէպի տաք երկիրներ, որպէսզի հոն մարդիկ եւ բոլոր կենդանիներն ու բոյսերը զովանան քիչ մը:

Քամին կը շարունակէ.


— Գիտե՛ս, ծովերուն, լիճերուն, գետերուն ջուրերը կը շոգիանան եւ ամպ կ'ըլլան արեւին տաքութենէն. ես այդ ամպերը կը տանիմ աշխարհի բոլոր կողմերը: Եթէ ես այդ ամպերը չցրուեմ՝ տեղ մը ամէն օր հեղեղ կ'ըլլայ, իսկ ուրիշ տեղ մը՝ բոյսերը, մարդիկ եւ կենդանիները առանց ջուրի կը մնան, եւ կը չորնան ու կը մեռնին...: տեղ մը այնքա՛ն ձիւն կը տեղայ՝ որ գիւղերն ու քաղաքները կը մնան ձիւնի տակ ու կը կորսուին, իսկ ուրիշ տեղ մը ձիւն ու անձրեւ չի տեղար բնաւ, եւ առանց ձիւնի եւ անձրեւի՝ աղբիւրները, առուները եւ գետերը կը ցամքին...:

— Այս որքա՛ն գործ ունիս դուն, — կ'ըսէ Արան անելի զարմացած:

— Ես տակաւին ուրիշ բաներ ալ կ'ընեմ, — կը շարունակէ Քամին, — գիտե՛ս՝ քաղաքներու մէջ օդը ապականած կ'ըլլայ ծովիս եւ փոշիէ. ես այդ ապականած օդը, ամէն օր, կ'առնեմ ու կը տանիմ, եւ անոր տեղ՝ քաղաք կը բերեմ դաշտերուն եւ լեռներուն մաքուր օդը...:

— Դուն իրապէ՛ս զբաղած մէկն ես, — կ'ըսէ Արան:

— Ու հիմա՛ մնաս բարո՛ւ, — կ'ըսէ Քամին Արային, — պէտք է մեկնիմ՝ գործ ունիմ, — ու կը շոյէ Արային դէմքն ու մազերը, եւ կը թոհ՛, կ'երթա՛յ...:



Երկրորդ օր.-

1. Պատմութիւնը կարդա՛ եւ հարցումներուն պատասխանները գրէ՛ կցուած թուղթին վրայ:


1.-----

2.-----

3.-----

Երրորդ օր.-

1. Պատմութիւնը կարդա՛ եւ հարցումներուն պատասխանները գրէ՛ կցուած թուղթին վրայ:



ԾԱՐԱԻՑԱԾ ԱԳՌԱԻԸ

Ծատ ծարաւցած ագռաւ մը կուծ մը գտաւ:
 Կուծին մէջ քիչ ջուր կար: Երկարեց վիզը, բայց,
 ջուրին չհասաւ:

— Ինչպէ՞ս կրնամ խմել այս ջուրէն,—
 անպայման ձեւ մը ըլլալու է,— մտածեց ան:

Ծիշդ այդ վայրկեանին ագռաւը հողին վրայ
 խնաքարեր տեսաւ: Զանոնք կտուցով վերցուց եւ
 կուծին մէջ լեցուց:

Քարերը ջուրին յատակը դիզուեցան եւ կամաց
 կամաց ջուրը վեր բարձրացաւ: Այնպէս, որ ագռաւը
 դիրութեամբ կրցաւ ջուր խմել:

Երբ կամք կայ, միջոց ալ կայ,— ըսաւ ագռաւը:
 Փոքրիկնե՛ր, այս պատմութենէն սորվինք մեր
 միտքը լաւ գործածել:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

- 1- Կուժը ջրամանի տեսակ մըն է:
- 2- Փոփր ֆարերուն կ'ըսենք ԽՃԱՔԱՐ:
- 3- Խնամարը կը գործածուի նամբաներու շինութեան ատեն:
- 4- Իրարու վրայ շարուելուն, կ'ըսենք դիգուիլ:

ՊԱՏԱՍԽԱՆԷ՛

- 1- Ի՞նչ մտածեց ագուարը կուժին ջուրը խմելու համար:
- 2- Կը յիշե՞ս քու կեանքէդ ասոր նմանող բան մը: Պատմէ՛:

Պատգամը

Այս դասը կը սորվեցնէ մեզի, թէ ամէն մարդ պէտք է իր միտքը գործածէ եւ նոր ձեւ մը գտնէ նեղութեան ատեն:

1.-----

2.-----
